

## ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

### Էլինա Գեղամյան

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,  
ՀՀ արդարադատության նախարարի խորհրդական*

Վարչարարության բողոքարկման ինստիտուտը, կարևոր նշանակություն ունենալով իրավունքի գերակայության և իրավական պետության հաստատման նպատակի կենսագործման հարցում, կարող է արդյունավետ գործել, եթե օրենսդրությամբ ապահովված լինեն իրավական պաշտպանության պատշաճ կառուցակարգեր, որոնց գործունեության որակը սերտորեն կապված է վարչարարության բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի որոշակիացման հետ:

Վարչարարության բողոքարկման սուբյեկտների շրջանակի կանխորոշումը թելադրված է իրավունքի գերակայության երկու բաղադրատարրերի՝ իրավունքի համընդհանրության ու օրենքի առաջ բոլորի հավասարության սկզբունքների լիարժեք կենսագործման անհրաժեշտությամբ: Բողոքարկման սուբյեկտների հայեցակարգի հիմքում այն կանխարգելիչ գաղափարն է, որ եթե չլինի գործադիր իշխանության ակտերը վիճարկելու իրավունք ունեցող որևէ սուբյեկտ, այդ մարմինները կկարողանան ազատորեն դուրս գալ իրենց իրավասության սահմաններից, և դատարաններն էլ իրավասու չեն լինի միջամտելու<sup>1</sup>: Սյուս կողմից բողոքարկման սուբյեկտների շրջանակի անհարկի նեղացումը և/կամ իրավական արդարացված շահագրգռվածության առկայության դեպքում անձին վարչարարության բողոքարկման իրավունք չվերապահելը կհանգեցնեն ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ոչ իրավաչափ վարչարարությունը վիճարկելու տեսանկյունից արդարադատության մատչելիության անհիմն սահմանափակման: Երրորդ, բողոքարկման սուբյեկտների չափազանց լայն շրջանակի սահմանումը լրջորեն կվտանգի իրավական որոշակիության սկզբունքը և մի շարք դեպքերում խնդրահարույց կլինի նաև սեփականության իրավունքի բաղադրատարր հանդիսացող իրավաչափ ակնկալիքի իրավունքի տեսանկյունից:

Վարչական իրավունքի տեսությունում վարչարարության բողոքարկման սուբյեկտների շրջանակի որոշման վերաբերյալ դեռևս միատեսակ դիրքորոշում չի ձևավորվել: Միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ վարչական ակտերի, վարչական մարմինների գործողության ու անգործության բողոքարկման իրավունքի ճանաչման և կենսագործման առումով տևական ժամանակ մի շարք երկրներում դեռևս չի ձևավորվել բողոքարկման սուբյեկտների վերաբերյալ միասնական մոտեցում: Պատճառը թերևս այն է, որ ի տարբերություն մասնավոր իրավահարաբերություններից բխող վեճերի, որոնցում դատարան կամ վեճի լուծման արտադատական եղանակի դիմող սուբյեկտների շրջանակը դեպքերի գերակշիռ մասում համընկնում է վիճելի իրավահարաբերության սուբյեկտներին, հանրային իրավահարաբերություններից բխող վեճերով իրավիճակն այլ է: Վարչարարությունը, որպես հանրային իրավական գործունեություն, մի շարք դեպքերում, բացի վարչական կոնկրետ ակտի հասցեատիրոջից, կարող է շոշափել նաև այլ անձանց իրավունքները: Ավելին, նորմատիվ վարչարարությունը կամ հանրային շահի

<sup>1</sup> St' u Hough, B., 1997. A Re-examination of the Case for a Locus Standi Rule in Public Law. *Cambrian Law Review*, 28, 83-104, էջ 3:

պաշտպանությանն առնչվող վարչարարությունն ուղղակի կամ անուղղակի ազդեցություն կարող է ունենալ անգամ անձանց անորոշ շրջանակի իրավունքների ու օրինական շահերի վրա: Հետևաբար, գիտագործնական մակարդակում կարևորագույն նշանակություն ունի այն հարցի պարզաբանումը, թե վարչարարության հետևանքով որոշակի ազդեցություն կրող սուբյեկտների որ շրջանակին պետք է տրվի վարչարարության՝ վարչական կամ դատական կարգով բողոքարկման իրավունքը, այդ իրավունքն ունեցող սուբյեկտների շահերի որ խումբն է իրավաբանորեն նշանակալի և իրավական պաշտպանության ենթակա:

Սահմանադրության 61-րդ հոդվածն իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության իրավունքով օժտում է յուրաքանչյուր անձի: Այս համատեքստում 63-րդ հոդվածում ամրագրված արդար դատաքննության իրավունքն էլ երաշխավորում է յուրաքանչյուր անձի համար իր գործի (...) քննության իրավունքը: Սահմանադրության 50-րդ հոդվածով երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքն էլ յուրաքանչյուր անձի ընձեռում է վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Անձանց ամենալայն շրջանակին տրվող այս իրավունքների սահմանադրաիրավական ձևակերպումներն արդեն իսկ թույլ են տալիս ուրվագծելու դատական պաշտպանության և պատշաճ վարչարարության իրավունքի մաս հանդիսացող՝ վարչարարության, համապատասխանաբար, դատական և վարչական կարգով բողոքարկման սուբյեկտների շրջանակի ընդհանուր սահմանը և բողոքարկման իրավունքի առկայությունը փաստելու հիմքում դրվող չափանիշը: Մասնավորապես, այս երկու իրավունքները երաշխավորում են յուրաքանչյուր անձի համար դատարան ու վարչական մարմնին դիմելու միջոցով ոչ թե ցանկացած, այլ միայն իր իրավունքներին ու ազատություններին առնչվող (իրեն առնչվող) հարցերի քննության իրավունք: Հետևաբար, վարչարարության բողոքարկման սուբյեկտների հիմնահարցերի քննարկման առանցքում պետք է դրվի հենց Սահմանադրության վերոնշյալ դրույթներից բխող՝ իր իրավունքներին ու ազատություններին առնչվող (իրեն առնչվող) գործերի քննության իրավունքը:

Դատական պաշտպանության իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի հիմքում ընկած վերը հիշատակված հիմնադրույթն իր արտացոլումն է գտել նաև Սահմանադրական դատարանի որոշումներում, որը 07. 09. 2010 թվականի թիվ ՍԴՈ-906 որոշմամբ արձանագրել է, որ բոլոր դեպքերում ընդհանուր կանոնն այն է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է կոնկրետ այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նրա իրավունքների խախտման վտանգ: Այնուամենայնիվ, իրավունքների խախտման վտանգն ինքնին դեռևս դատական պաշտպանության իրավունքի առկայությունը չի փաստում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) արձանագրել է, որ վեճը պետք է լինի իրական և իր բնույթով՝ լուրջ: Վեճը չի կարող կապված լինել անձի քաղաքացիական իրավունքների և պարտականությունների հետ աննշան կամ հեռակա կերպով, այլ հենց այդ իրավունքները և պարտականությունները պետք է կազմեն հայցի առարկան, և վեճի հնարավոր լուծումը պետք է վճռական և ուղղակի նշանակություն ու ազդեցություն ունենա պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա<sup>1</sup>: Այսպիսով, Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատույթ-

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Լը Քոնստեն և մյուսներն ընդդեմ Բելգիայի թիվ 6878/75 դիմումով ՄԻԵԴ 23.06.1981 թվականի վճիռը, պարբ. 47, Բենթհենն ընդդեմ Նիդերլանդների թիվ 8848/80 դիմումով ՄԻԵԴ 23.10.1985 թվականի վճիռը, պարբ. 32, Կառոլի Նազին ընդդեմ Հունգարիայի թիվ 56665/09 դիմումով ՄԻԵԴ 14.09.2017թ վճիռը, պարբ. 60, Ռեզներն ընդդեմ Չեխիայի թիվ 35289/11 դիմումով ՄԻԵԴ 19.09.2017թ. գործով վճիռը, պարբ. 99, Նեյթ-Լիմանն ընդդեմ Շվեյցարիայի թիվ 51357/07 դիմումով 15032018թ վճիռը, պարբ. 106, Դենիսովն ընդդեմ Ուկրաինայի թիվ 76639/11 դիմումով 25.09.2018թ վճիռը, պարբ. 44:

յունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը երաշխավորում է ոչ թե ցանկացած, այլ միայն այնպիսի վեճերի քննության իրավունք, որոնց քննությունն անձի իրավունքների ու պարտականությունների վրա էական և ուղղակի ազդեցություն ունի: Վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումներով փաստել է այս ընդհանուր սկզբունքի կիրառելիությունը նաև վարչական ակտերի, վարչական մարմինների գործողության կամ անգործության վիճարկման հարաբերությունների նկատմամբ՝ արձանագրելով, որ վարչական ակտը վիճարկելիս դատական պաշտպանությունից օգտվելը չի կարող լինել ինքնանպատակ, այլ այն պետք է ուղղված լինի անձի խախտված իրավունքների վերականգնման ապահովմանը: Ուստի, դիմելով վարչական դատարան, անձը ոչ միայն պետք է հիմնավորի, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերն ընդունվել, գործողությունները կամ անգործությունը կատարվել են օրենքի խախտմամբ, այլ նաև պետք է մատնանշի իր այն իրավունքներն ու ազատությունները, որոնք խախտվել են<sup>1</sup>:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատշաճ վարչարարության իրավունքի հիմքում ևս անձի՝ *իրեն առնչվող* գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքն է, կարծում ենք, որ պաշտպանվող իրավունքների և ազատությունների վրա էական և ուղղակի ազդեցություն ունենալու վերաբերյալ հիշատակված ընդհանուր կանոնը կիրառելի է նաև վարչարարության՝ վարչական կարգով բողոքարկման հարաբերությունների նկատմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքը (այսուհետ՝ Օրենք), կարգավորելով վարչարարության վարչական կարգով բողոքարկման հարաբերությունները, ուղղակի կարգավորումներ չի պարունակում վարչարարությունը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների վերաբերյալ: Մինչդեռ ակնհայտ է, որ բողոքարկման սուբյեկտների շրջանակի որոշակիացումն էական նշանակություն ունի ոչ միայն վարչարարության բողոքարկման իրավունքի կենսագործումն ապահովելու, այլև ընդհանրապես պատշաճ վարչարարության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից: Ուստի վարչարարության բողոքարկման սուբյեկտների շրջանակի հիմքում ընկած չափանիշներն առանձնացնելու հիմքում կարող են դրվել նաև վերը հիշատակված սահմանադրական կարգավորումները և Օրենքի դրույթների համակարգային վերլուծությունը:

Նախ, Օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը: Օրենքի այս դրույթից բխում է, որ անձը վարչական ակտերը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու իրավունք ունի միայն իր իրավունքների պաշտպանության նպատակով: Ընդ որում, ակնհայտ է նաև, որ Օրենքը բողոքարկման սուբյեկտների շրջանակը չի սահմանափակում միայն վարչական ակտի հասցեատիրոջով, քանի որ բողոքարկման իրավունքի առկայության որոշման հիմքում դնում է ոչ թե ուղղակիորեն ակտի հասցեատեր լինելը, այլ բողոքարկող սուբյեկտի՝ իր իրավունքի պաշտպանության նպատակը:

Այսպիսով, միջամտող վարչական ակտերը, զուգորդվող վարչական ակտերը, վարչական մարմնի անգործությունը և գործողությունը վարչական կարգով բողոքարկելու իրավունքը վերապահված են նախ վարչարարության հասցեատեր սուբյեկտին: Այնուամենայնիվ, բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը միայն վարչարարության հասցեատիրոջով սահմանափակվելը նպատակա-

<sup>1</sup> Տե՛ս թիվ ՎԴ/0909/05/10 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 05.04.2013 թվականի որոշումը:

հարմար չէ, քանի որ բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի անհարկի նեղացումը կարող է հանգեցնել ոչ միայն պատշաճ վարչարարության և/կամ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքների խախտման, այլև անհամատեղելի լինել վարչարարության բողոքարկման ինստիտուտի էությանը և նպատակներին: Ուստի վարչարարության բողոքարկման սուբյեկտների շրջանակի պարզումը և սուբյեկտների շրջանակի որոշումն էական նշանակություն ունեն նաև այս համատեքստում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունն ակնհայտորեն վկայում է, որ վարչարարության բողոքարկման իրավունքի ճանաչումից ի վեր բողոքարկման սուբյեկտների շրջանակի հարցում, ըստ էության, միանշանակ է եղել կոնկրետ վարչական ակտի հասցեատիրոջ կողմից այդ ակտով իր իրավունքները խախտվելու դեպքում այն բողոքարկելու իրավունքը: Այնուամենայնիվ, վարչական մարմինների գործողությունները, անգործությունը և վարչական ակտերը վիճարկելու իրավունք ունեցող, վարչարարության հասցեատիրոջից զատ այլ սուբյեկտների շրջանակի վերաբերյալ դիրքորոշումները վերջին մի քանի տասնամյակներում զգալի էվոլյուցիա են ապրել: Այսպես, նախորդ դարի առաջին տասնամյակներին ընդհանուր իրավունքի երկրների դատական պրակտիկայում իշխում էր այն տեսակետը, որ չնայած այն հանգամանքին, որ անձը վարչական մարմինների ապօրինի գործողություններից պաշտպանվելու իրավունք ունի, վերջինս չէր կարող բողոքարկել անմիջականորեն իր իրավունքներին չառնչվող ակտերը: Մասնավորապես, մի գործով հայցվորը Իռլանդիայում դատարան էր դիմել՝ պահանջելով արգելել նոր ճանապարհի կառուցումը՝ հայցի հիմքում, ի թիվս այլնի, դնելով այն հանգամանքը, որ նոր ճանապարհի կառուցմամբ ավելանալու է ճանապարհային հարկի դրույքաչափը, հետևաբար՝ ինքը, որպես հարկ վճարող, դատարան դիմելու շահագրգիռ անձ է: Իռլանդիայի վերաքննիչ դատարանը, սակայն, այս գործով գտել էր, որ հայցվորը ճանապարհի կառուցումն արգելելու վերաբերյալ հայց ներկայացնելու իրավունք ունի այն չափով, որքանով որ կունենար հասարակության ցանկացած այլ անդամ: Հետևաբար՝ հայցվորին այդպիսի պահանջով դատարան դիմելու իրավունք ընձեռելը կհանգեցնի այն բանին, որ հասարակության անդամների անորոշ շրջանակ առեւելի մեծ քանակով հայցեր ներկայացնելու իրավունք կունենա<sup>1</sup>: Այս գործով արտահայտված դիրքորոշումն արտացոլում է այն տեսակետը, որը երկար ժամանակ գերիշխող է եղել ընդհանուր իրավունքի բոլոր երկրներում: Նման տեսակետը, ըստ էության, հիմնավորվում էր այն փաստարկով, որ անձանց անորոշ շրջանակին վարչական մարմինների դեմ հայցեր ներկայացնելու իրավունք ընձեռելը դատական համակարգում քաոս կստեղծի, ինչպես նաև անհամատեղելի կլինի իշխանությունների բաժանման սկզբունքի հետ:

Հետագա տասնամյակներում, սակայն, վարչական ակտերը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակն աստիճանաբար ընդլայնվեց: Այսպես, դեռևս 1975 թվականին Կանադայի գերագույն դատարանն արտահայտել է այն դիրքորոշումը, որ հարկ վճարողն իրավունք ունի վիճարկելու դաշնային կամ նահանգային այն օրենսդրության սահմանադրականությունը, որը վերջինիս իրավունքները շոշափում է ոչ ավելի, քան հասարակության այլ անդամի իրավունքները<sup>2</sup>: Այս դիրքորոշումը կիրառելի էր նաև վարչական ակտերի իրավաչափության վիճարկման համատեքստում: Նույն ժամանակահատվածում բողոքարկման իրա-

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Իռլանդիայի վերաքննիչ դատարանի Palles, C. B., And Holmes And Cherry, L.J գործով որոշումը, Իռլանդիայի դատարանների դիրքորոշումների մասին առավել մանրամասն տե՛ս Judicial Review of Administrative Action: The Problem of Remedies, The Law Reform Commission, Working Paper No. 8-1979, հասանելի է հետևյալ հղումով <https://www.lawreform.ie/fileupload/consultation%20papers/wpJudicialReviewAdminAction.html>:

<sup>2</sup> Տե՛ս McNeil v. Nova Scotia Board of Censors (1975) 55 D.L.R. (3d) 632:

վունք ունեցող սուբյեկտների շրջանակի ազատականացմանն ուղղված այդպիսի դիրքորոշում է արտահայտել նաև ԱՄՆ գերագույն դատարանը<sup>1</sup>: Այսպիսով, նմանատիպ դիրքորոշումների արտահայտմամբ որոշակիորեն սկսեց ուրվագծվել վարչական ակտի հասցեատիրոջից զատ այլ սուբյեկտների շրջանակը, որոնց իրավունքները խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել համապատասխան ակտերով, հետևաբար՝ ովքեր կարող են նաև վարչարարության բողոքարկման իրավունք ունենալ: Այդ շրջանակը բողոքարկման սուբյեկտների շրջանակի ազատականացման այս փուլում ընդգրկում էր այն անձանց, որոնց իրավունքներն ու օրինական շահերը վարչարարությամբ շոշափվում էին ավելի շատ, քան հասարակության մնացած անդամներինը: Բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի հետագա ընդլայնումն ակնառու էր հատկապես շրջակա միջավայրի պաշտպանության գործերով<sup>2</sup>:

Բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի ընդլայնմանն էր հակված նաև Ավստրալիայում ձևավորված պրակտիկան: Մասնավորապես, Ավստրալիայում հանրային շահերի պաշտպանության հայցերի բարեփոխման հանձնաժողովը դեռևս 1977 թվականին նշել է, որ «շահ» կամ «շահագրգռվածություն» հասկացություններն ինքնին բավարար չեն բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակին որոշակիություն հաղորդելու համար, քանի որ այդ հասկացությունների կիրառման դեպքում սուբյեկտների շրջանակը փոխկապակցվում է ֆինանսական կամ գույքային վնասի հետ: Հանձնաժողովն առաջարկել է կիրառել «իրական շահագրգռվածություն» հասկացությունը: Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս հասկացությունը ևս որոշակի առումով գնահատողական է, հանձնաժողովն ընդգծել է, որ հանրային նշանակության հարցերի դեպքում այն պետք է լայն մեկնաբանություն ստանա՝ բողոքարկման իրավունք ընձեռելով հասարակության ցանկացած անդամի, մինչդեռ ավելի շատ անձնական բնույթի, կոնկրետ անձին առնչվող գործերով բողոքարկման իրավունք պետք է տրվի միայն այն անձին, ում իրավունքներն ուղղակիորեն խախտվել են<sup>3</sup>: Հանձնաժողովի այս դիրքորոշումից ակնհայտ է նաև, որ վարչարարության բողոքարկման սուբյեկտների շրջանակը տարբերվում է՝ կախված վիճարկվող որոշման բնույթից, այն է՝ վիճարկվող որոշումը միայն կոնկրետ անձի իրավունքներ<sup>4</sup>ի է առնչվում, թե՞ անձանց լայն շրջանակի: Թեև վերոնշյալ դիրքորոշումներն առավելապես վերաբերում են դատական կարգով վարչարարության վիճարկմանը, կարծում ենք, որ ամբողջությամբ կիրառելի են նաև վարչական կարգով բողոքարկման հարաբերությունների նկատմամբ:

Ներկայումս լայնորեն տարածված է և մեզ համար ընդունելի է Կանադայի իրավական համակարգում կիրառվող դասակարգումը, ըստ որի՝ վարչական ակտերը վիճարկելու երկու հիմք է առանձնացվում՝ մասնավոր շահի պաշտպանությունը և հանրային շահի պաշտպանությունը: Մասնավոր շահի պաշտպանության հիմքով վարչական ակտը բողոքարկելու իրավունքը ներկայումս Կանադայում ընձեռված է միայն այն անձին, ում իրավունքների վրա անմիջականորեն ազդել է տվյալ ակտը, կամ ով տուժել է այդ ակտից: Մասնավորապես, խոսքն այն անձի մասին է, ում լիցենզիա տրամադրելու դիմումը մերժվել է: Բողոքարկող սուբյեկտը կարող է համարվել նաև համապատասխան վարչական ակտի հետևանքով ուղղակիորեն տուժող, եթե վարչական մարմնի կիրառած ընդհանուր քաղաքականությունն ուղղա-

<sup>1</sup> St' u Flast v. Cohen (1968) 392 U.S. 83, U.S. v. Richardson (1974) 418 U.S. 166; Warth v. Seldin (1975) 422 U.S. 490.

<sup>2</sup> St' u, օրինակ, U.S. v. SCRAP (1973) 412 U.S. 669; Sierra Club v. Morton (1972); 405 U.S. 727. See too United Church of Christ v. F.C.C. (1966) 359 F. 2d 994; Scenic Hudson Preservation Conference v. F.P.C. (1965) 354 F. 2d 608 (Court of Appeals) :

<sup>3</sup> St' u Access to Courts – 1: Standing: Public Interest Suits, Working Paper No. 7 (9 November 1977), էջ 58:

կիրորեն ազդել է տվյալ սուբյեկտի վրա: Ընդ որում, պետության կողմից պաշտպանության ենթակա մասնավոր՝ անձնական շահի առկայության մասին կարելի է խոսել միայն այն դեպքում, եթե բողոքարկող սուբյեկտի շահը հասարակության ընդհանուր շահից տարբերվում է: Այլ է իրավիճակը հանրային շահի պաշտպանության նպատակով ներկայացվող հայցերի դեպքում. վարչարարությունը թույլ է տրվում վիճարկել նաև այն անձանց, ովքեր դատարան դիմելու համար որևէ առանձնահատուկ, հասարակության մյուս անդամներից տարբերվող շահ չունեն: Այնուամենայնիվ, այս կանոնը չի նշանակում, որ ցանկացած անձ կարող է վիճարկել փոքր-ինչ հանրային բնույթ ունեցող ցանկացած ակտ: Վիճարկվող ակտի հիմքում ընկած վիճելի իրավահարաբերությունը պետք է հասարակության համար ընդհանուր առումով կարևոր նշանակություն ունենա, և դատարան դիմող անձը պետք է հիմնավորի ոչ միայն այս հանգամանքը, այլև ունենա իրական հետաքրքրություն տվյալ հարցում<sup>1</sup>:

Այսպիսով, միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա վարչարարության բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակի որոշման հիմքում, որպես ընդհանուր կանոն, կարող է դրվել «իրական շահագրգռվածության» չափանիշը, ինչը ենթադրում է, որ անձնական, մասնավոր շահի պաշտպանության նպատակով վարչարարությունը բողոքարկելու իրավունք պետք է ունենա այն սուբյեկտը, որի իրավունքները և/կամ օրինական շահերն անմիջականորեն շոշափվում են վարչարարությամբ: Այս դիրքորոշումն, ըստ էության, իր արտացոլումն է գտել նաև ներպետական դատական պրակտիկայում: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ անձը կարող է դիմել դատական պաշտպանության, եթե ունի «իրական (ռեալ)» իրավունքներ, որոնք խախտվել են կամ կարող են խախտվել, և վարչական արդարադատություն հայցող անձանց կողմից ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված վարչական գործերից յուրաքանչյուրով պետք է պարզվի՝ արդյոք հայցվորը դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ է, այսինքն՝ «շահագրգիռ անձ», քանի որ միայն իրավական շահագրգռվածության առկայության պարագայում անձը կարող է ակնկալել իր խախտված իրավունքների դատական պաշտպանություն<sup>2</sup>:

Սույն գիտահետազոտական աշխատանքի հետագա շարադրանքում վարչարարության բողոքարկման սուբյեկտների շրջանակը քննարկվում է՝ հիմք ընդունելով վերոնշյալ դասակարգումը և կենտրոնանալով անձնական շահի պաշտպանության նպատակով վարչարարության վարչական կարգով բողոքարկման իրավունք ունեցող սուբյեկտների վրա:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացի վարչական ակտի հասցեատիրոջից, վարչական վարույթի մասնակիցներ են նաև երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով: Օրենքը չի կարգավորում երրորդ անձանց վարչական վարույթին ներգրավելու կարգը, այդ առնչությամբ վարչական մարմնի լիազորությունները: Այնուամենայնիվ, երրորդ անձանց ինստիտուտի էությունից բխում է, որ բոլոր այն դեպքերում, երբ վարչական վարույթ հարուցելու պահին կամ վարչական վարույթի ընթացքում վարչական մարմնի համար ակնհայտ է դառնում, որ ընդունվելիք վարչական ակտով կարող են շոշափվել որոշակի անձանց իրավունքները կամ օրինական շահերը, վարչական մարմնի պարտականությունը պետք է լինի այդ անձանց վարչական վարույթին ներգրավելը կամ առնվազն վարույթին ներգրավվելու իրավունքի վերաբերյալ վերջիններիս ծանուցելը: Մյուս կողմից՝ այդ անձինք պետք է իրավունք ունենան վարչական վարույթին ներգ-

<sup>1</sup> St' u Challenging Government Action in Canada, U.S. Perspectives from Canada's Law Firm, էջ 4, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.blg.com/-/media/insights/documents/blg-legal-primers-for-us-market-challenging-gov-action-in-canada.pdf?la=en>, 27.10.2021թ.:

<sup>2</sup> St' u թիվ ՎԴ/9190/05/13 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը:

րավել սեփական դիմումի հիման վրա: Ներկայումս նման կարգավորումներ են նախատեսված «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքով, որի 74-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթի մասնակից է նաև շահագրգիռ անձը՝ այն անձը, որի իրավունքներն իրավախախտման հետևանքով անմիջականորեն խախտվել են: Անձը շահագրգիռ է ճանաչվում իր միջնորդության հիման վրա՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի ընդունած՝ նրան շահագրգիռ անձ ճանաչելու մասին որոշմամբ:

Երրորդ անձանց դատավարական ինստիտուտի էությունն այն է, որ նրանք, ինչպես որ հայցվորն ու պատասխանողը, դասվում են գործին մասնակցող անձանց թվին, գործի ելքում ունեն և՛ նյութաիրավական, և՛ դատավարական շահագրգռվածություն, վարույթում հանդես են գալիս իրենց անունից և իրենց շահերի պաշտպանությամբ<sup>1</sup>: Երրորդ անձանց այս առանձնահատկությունը վերաբերելի է նաև վարչական վարույթում հանդես եկող երրորդ անձանց: Վարչական վարույթին մասնակցող երրորդ անձինք, ընդհանուր առմամբ, ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ վարույթին մասնակցող մյուս անձինք: Հետևաբար, հիմք ընդունելով նաև Օրենքի ընդհանուր կարգավորումն առ այն, որ անձն իր իրավունքների պաշտպանության նպատակով վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու իրավունք ունի, երրորդ անձինք իրավունք ունեն բողոքարկելու վարչարարությունը: Շահագրգիռ անձի բողոքարկման իրավունքը, որպես, ի թիվս վարույթի այլ մասնակիցների, նաև շահագրգիռ անձանց վերապահված իրավունք, ուղղակիորեն ամրագրված է, օրինակ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 75-րդ հոդվածով:

Վերոշարադրյալի հիման վրա պարզ է դառնում, որ վարչարարության՝ վարչական կարգով բողոքարկման սուբյեկտներն են նախ վարչական ակտի հասցեատերը և վարչական վարույթին մասնակցող երրորդ անձինք: Սակայն գործնականում բողոքարկման սուբյեկտների շրջանակն այս երկու սուբյեկտներով չի սահմանափակվում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Օրենքում վարչական վարույթին երրորդ անձանց ներգրավելու կարգը և այդ առնչությամբ վարչական մարմնի պարտականությունը սահմանված չլինելու պայմաններում հնարավոր են բազմաթիվ դեպքեր, երբ երրորդ անձի հատկանիշներն ունեցող սուբյեկտը վարչական վարույթի մասին առհասարակ ծանուցված չլինի կամ, ծանուցված լինելով հանդերձ, ներգրավված չլինի վարչական վարույթին: Հնարավոր են նաև մի շարք դեպքեր, երբ վարչական ակտը կարող է շոշափել անորոշ շրջանակի անձանց իրավունքները, և օբյեկտիվորեն անհնարին կլինի բոլոր այդ անձանց վարույթին ներգրավելը: Ակնհայտ է, որ վերոնշյալ երկու դեպքերում վարչական վարույթին ներգրավված չլինելը չի բացառում և/կամ չի վերացնում կայացվելիք վարչական ակտով տվյալ սուբյեկտի իրավունքները կամ օրինական շահերը շոշափվելու հանգամանքը: Հետևաբար նման դեպքերում անձը, անկախ վարչական վարույթին իր ներգրավված լինելու հանգամանքից, իրավունք ունի բողոքարկելու վարչարարությունը, եթե հիմնավորում է իր «իրական շահագրգռվածության» հանգամանքը, այն է՝ կայացված վարչական ակտով իր իրավունքների կամ օրինական շահերի խախտումը: Նման դեպքերում «իրական շահագրգռվածության» առկայության վերաբերյալ բացարձակ կանոններ չեն կարող սահմանվել, և շահագրգռվածության առկայությունը յուրաքանչյուր դեպքում պետք է պարզի վարչական մարմինը՝ ելնելով վարչական ակտը բողոքարկող սուբյեկտի ներկայացրած հիմնավորումից: Այլ կերպ ասած՝ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և գործը ըննող մարմինն իրավասու է գնահատելու այս հասկացությունը յուրաքանչյուր գործով՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները և

<sup>1</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, Չորրորդ հրատ., Եր.: «Ոսկան Երևանցի» հրատ., 2012, էջեր 152-153:

պարզելով, թե արդյոք տվյալ անձն ունի իրավական շահագրգռվածություն, թե՛ ոչ<sup>1</sup>: Վճռաբեկ դատարանը մեկ այլ գործով արձանագրել է, որ իրավունքների խախտման կամ այլ կերպ ասած՝ դատարան դիմելու իրավունքը կրող սուբյեկտ լինելու վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է հենց հայցվորը<sup>2</sup>:

Բողոքարկման սուբյեկտների շրջանակի վերաբերյալ Օրենքից բխեցվող չորրորդ կանոնը վերաբերում է բարենպաստ վարչական ակտը դրա հասցեատեր չհանդիսացող սուբյեկտի կողմից վիճարկելուն: Այս կանոնը, ըստ էության, վերը հիշատակված երկրորդ և երրորդ դեպքերի մասնավոր դրսևորում է: Սակայն, մյուս կողմից, բարենպաստ վարչական ակտի վիճարկման հնարավորությունն Օրենքով ամրագրված բողոքարկման իրավունքի ընդհանուր կանոնից բացառություն է՝ այն տրամաբանությամբ, որ Օրենքի այդ նորմն ամրագրում է «վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները» բողոքարկելու իրավունքը, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ խոսքը բացառապես միջամտող վարչական ակտերի և զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթների մասին է, և բարենպաստ վարչական ակտերի կամ զուգորդվող ակտերի բարենպաստ դրույթների բողոքարկումը թե՛ ակտի հասցեատիրոջ, թե՛ այլ անձանց կողմից հիշատակված նորմի բովանդակությունից չի բխում: Այնուամենայնիվ՝ ակնհայտ է, որ Օրենքն այլ նորմով ճանաչում է նաև բարենպաստ վարչական ակտը դրա հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վիճարկելու հնարավորությունը<sup>3</sup>: Ընդ որում, այս դեպքում ևս Օրենքը բողոքարկման իրավունքը չի կապում վարչական վարույթի մասնակից հանդիսանալու հետ: Հետևաբար՝ բարենպաստ վարչական ակտերի, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթների բողոքարկման իրավունք կարող են ունենալ նաև վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող սուբյեկտները: Ընդ որում, ինչպես վերն արդեն նշվել է, վարչական վարույթի մասնակից հանդիսանալու դեպքում բարենպաստ վարչական ակտը բողոքարկելու վերջիններիս իրավունքը վարչական վարույթի մասնակից հանդիսանալու փաստի ուժով ինքնին ենթադրվում է: Խնդրահարույց է, սակայն, այն իրավիճակը, երբ վարույթին մասնակից չդարձած անձն է փորձում բողոքարկել այլ անձի նկատմամբ կայացված վարչական ակտը: Օրենքն այս հարցի կարգավորմանն անդրադարձ չի կատարում, ինչպիսի պայմաններում բարենպաստ վարչական ակտը բողոքարկելու սուբյեկտների շրջանակը որոշելիս նպատակահարմար ենք համարում հիմք ընդունել վերևում հիշատակված ընդհանուր կանոնները:

Այսպես, պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքից բխում է, որ իր գործի քննության իրավունքը չի կարող վերաբերելի համարվել միայն միջամտող վարչական ակտերի նկատմամբ, և վարչական ակտի բարենպաստ բնույթն ինքնին չի բացառում այդ ակտն իր իրավունքներին ու օրինական շահերին առնչվելու դեպքում իրավական պաշտպանություն հայցելը: Հետևաբար, բարենպաստ վարչական ակտերի վիճարկման դեպքում ևս կիրառելի է «իրական շահագրգռվածության» կանոնը, և բողոքարկման իրավունքը պետք է ընձեռվի այն անձին, ով հիմնավորում է կայացված վարչական ակտով իր իրավունքները կամ օրինական շահերն անմիջականորեն խախտված լինելը: Ընդ որում, ի տարբերություն վարչական վարույթի մասնակից հանդիսացող անձանց կողմից ակտը վիճարկելու դեպքերի, երբ բողոքարկման իրավունքն ինքնին ենթադրվում է, վարույթին մասնակից

<sup>1</sup> Տե՛ս թիվ ՎԴ/3477/05/13 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 26.12.2014 թվականի որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս Ջորջիո ԱՐՄԱՆԻ Ս.Պ.Ա. Միլան, Սվիս Բրենչ Մենդրիսիո ընկերությունն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ ի դեմս Մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «Այգեպատ» գինու-կոնյակի գործարան» ՍՊԸ-ի թիվ ՎԴ/9190/05/13 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը:

<sup>3</sup> Տե՛ս Օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետը:



չդարձված անձանց կողմից ակտը բողոքարկվելու դեպքում գործում է հակառակ կանխավարկածը, այն է՝ բարենպաստ վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձն այն բողոքարկելու իրավունք չունի, քանի դեռ հակառակը չի ապացուցվել: Այս դեպքում ևս բողոքարկման իրավունքի, այսինքն՝ իրական շահագրգռվածության առկայության ապացուցման բեռը կրում է վարչական ակտը բողոքարկող անձը, և վարչական մարմինը բողոքն ըստ էության քննելուց զատ պարտավոր է գնահատման առարկա դարձնել բողոքարկող անձի շահագրգռվածության առկայության հանգամանքը:

Հարկ ենք համարում ընդգծել նաև, որ Օրենքի վերը հիշատակված կարգավորումները հիմք են տալիս ենթադրելու, որ այն ուղղակիորեն չի ամրագրում բարենպաստ վարչական ակտն այդ ակտի հասցեատիրոջ կողմից վիճարկվելու հնարավորությունը, և այս հիմնահարցն ինքնին առանձին ուսումնասիրության առարկա է: Այնուամենայնիվ, սույն հոդվածի շրջանակում նպատակահարմար ենք համարում արձանագրել, որ պատշաճ վարչարարության սահմանադրական իրավունքից և «իրական շահագրգռվածության» հիմնավորման վերաբերյալ վերը հիշատակված կանոնից բխում է, որ անձի նկատմամբ կայացված ակտի «բարենպաստ» բնույթն ինքնին չի բացառում նման ակտով տվյալ անձի իրավունքներն ու օրինական շահերը խախտվելը, և «իրական շահագրգռվածությունը» (իր իրավունքները կամ օրինական շահերն անմիջականորեն խախտված լինելը) հիմնավորելու դեպքում բարենպաստ վարչական ակտը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտի բարենպաստ դրույթները վիճարկելու իրավունք պետք է ունենա նաև այդ վարչական ակտի հասցեատերը:

*Այսպիսով.*

**1. *Վարչարարության՝ վարչական կարգով բողոքարկման իրավունքը Սահմանադրությանը անդադրված պատշաճ վարչարարության իրավունքից ուղղակիորեն ածանցվող իրավունք է, և վարչարարության բողոքարկման իրավունքը պետք է դիտվի պատշաճ վարչարարության իրավունքից բխող՝ իր իրավունքներին ու ազատություններին առնչվող (իրեն առնչվող) գործերի քննության իրավունք:***

**2. *Իր իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության նպատակով վարչարարության բողոքարկման սուբյեկտների շրջանակը որոշելու հիմնական չափանիշը սուբյեկտի «իրական շահագրգռվածության» փաստարկն է, ինչը ենթադրում է, որ բողոքարկման իրավունք կարող է ունենալ միայն այն անձը, ում իրավունքները կամ օրինական շահերն անմիջականորեն խախտվել են իրականացված վարչարարությամբ:***

**3. *Միջամտող վարչական ակտերը և զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները իրենց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության նպատակով վիճարկելու իրավունք ունեն վարչական ակտի հասցեատերը և վարչական վարույթին մասնակցող երրորդ անձինք, ինչպես նաև այն անձը, ով հիմնավորում է իր «իրական շահագրգռվածությունը», իսկ բարենպաստ վարչական ակտերը և զուգորդվող վարչական ակտերի բարենպաստ դրույթները՝ վարչական վարույթին մասնակցող երրորդ անձինք, ինչպես նաև վարչական ակտի հասցեատերը և վարչական վարույթին մասնակցող չդարձված և վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձինք, եթե հիմնավորում են իրենց «իրական շահագրգռվածությունը»:***

**4. *Վարչական մարմինների գործողությունները և անգործությունն իրենց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության նպատակով բողոքարկելու իրավունք ունեն տվյալ գործողության կամ անգործության հասցեատերը, ինչպես նաև այլ անձինք, եթե հիմնավորում են իրենց «իրական շահագրգռվածությունը»:***

Սույն հետազոտությամբ առաջադրված եզրահանգումները, կարծում ենք, էական նշանակություն կարող են ունենալ նաև հանրային շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական միավորումներին վարչարարության բողոքարկման սուբյեկտներ ձևանալու, խմբային հայցերի ինստիտուտի ուրվագծման և նմանաբնույթ այլ հարցադրումների առնչությամբ համալիր լուծումներ մշակելու համատեքստում:

## СУБЪЕКТЫ ОСПАРИВАНИЯ АДМИНИСТРИРОВАНИЯ

Элина Гегамян

*Аспирант кафедры конституционного права ЕГУ,  
Советник Министра юстиции Республики Армения*

Уточнение круга субъектов, имеющих право оспаривать администрирование, по существу связано с реализацией принципов общности права и равенства перед законом, а также конституционного права на надлежащее администрирование и его неотъемлемой частью - правом оспаривания администрирования. Критерии, необходимые для определения круга субъектов, имеющих право оспаривать администрирование, рассматриваются в этой научной статье, в результате анализа отечественных и зарубежных теоретических источников, законодательства Республики Армения, правовых позиций ЕСПЧ, Конституционного суда, Кассационного суда и практики судов других государств. Автор делает вывод о том, что основным критерием для определения *locus standi* при оспаривании администрирования должен быть аргумент «реальной заинтересованности».

## SUBJECTS OF CHALLENGING THE ADMINISTRATION

Elina Geghamyan

*PhD Student at the YSU Chair of Constitutional Law,  
Adviser to the Minister of Justice of the Republic of Armenia*

The determination of the scope of subjects having a right to challenge the administration is strictly connected to the realization of the principles of the generality of law and equality before the law, as well as to the constitutional right of proper administration and an integral part of it – the right to challenge the administration. The criteria needed to determine the scope of subjects entitled to challenge the administration are discussed in this scientific article - in the result of an analysis of domestic and foreign theoretical sources, legislation of the Republic of Armenia, legal positions of the ECHR, the Constitutional court, the Cassation Court and the practice of courts of other states. In the result, the author concludes that the main criteria for determining the *locus standi* in challenging the administration shall be the “real interest” argument.

**Բանալի բառեր** - վարչարարության բողոքարկման իրավունք, բողոքարկման սուբյեկտներ, պատշաճ վարչարարության իրավունք, իրական շահագրգռվածություն:

**Key words:** *right to challenge the administration, locus standi, right of proper administration, real interest.*

**Ключевые слова:** *право оспаривать администрирование, субъекты оспаривания администрирования, locus standi, право на надлежащее администрирование, реальная заинтересованность.*